

ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԲԱՅԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

«Գործիք» հասկացությունը համարվում է մեկը համընդհանուր իմաստաբանական հասկացություններից, որը վերարտադրում է իրականության մեջ գոյություն ունեցող նյութական աշխարհի առարկաների միջև եղած հարաբերությունը (Կացնելսոն Ս. Դ.; 1971; Բոնդարկո Ա. Վ.; 1974): Չնայած դրան, լեզվաբանների մեջ չկա մեկ միասնական կարծիք այն մասին, թե ինչ պետք է ներառել «գործիք» հասկացության մեջ: Օրոշոր լեզվաբաններ «գործիքը» և «միջոցը» դիտարկում են որպես մեկ միասնական խումբ, իսկ մյուսները տալիս են «միջոցի» և «գործիքի» տարբերակում (Ապրեսյան Յու.): «Միջոցի» և «գործիքի» տարբերակման հիմնական չափանիշն ըստ Ապրեսյանի միջոցի «սպառումն» է և «կապակցելիությունը» (կարել ամուր թելերով): «Միջոցի» օգտագործումը տանում է դեպի նրա սպառում, այն ավելի ու ավելի քիչ է մնում ազատ վիճակում (կրակել փամփուշտներով և կրակել հրացանով): Մինչդեռ «գործիքը» գտնվում է չկապակցված, ազատ վիճակում (կրակել հրացանից): Այսպիսով, կարելի է ասել, որ «միջոցի» օգտագործումը բերում է նրա բանական և որակական փոփոխության:

«Գործիք»-ի վերլուծության ժամանակ մենք հաճախակի օգտագործելու ենք ուզուալ և օկագիտնալ (ընդունված և պատահական) գործիք տերմինները: Այս առումով անհրաժեշտ է տալ այս տերմինների բնորոշումը: Ուզուալ են այն գործիքները, որոնք ամրագրված են որոշակի գործողությունների: Օր՝ to kill բայի հետ մարդը կապում է մի խումբ գործիքներ, որոնք անհրաժեշտ են այդ բայով արտահայտված գործողության իրականացման համար՝ օր. to kill with a bottle: Նրանք բայի հետ սերտ կապի մեջ չեն և նրանց հայտնվելը տվյալ իրավիճակում մասամբ պայմանական բնույթ է կրում:

Գործիքային հարաբերություն արտահայտող բայերը մենք կոչելու ենք ադյեկտային բայեր: Դրանք այն բայերն են, որոնք արտահայտում են օբյեկտի և սուբյեկտի միջև գոյություն ունեցող այնպիսի հարաբերություններ, երբ սուբյեկտն ազդում է օբյեկտի վրա որոշակի գործիքի /ադյեկտի/ օգնությամբ:

Լեզվական նյութի ուսումնասիրության ժամանակ, մենք առաջնորդվում ենք բայակենտրոն տեսությամբ, որի համաձայն նախադասության մեջ իշխող դերը պատկանում է բային (Խոլոդովիչ Ա.Ա.; 1979; Ռե. Չեյֆ; 1975): Հենց բայով է պայմանավորված այն, թե ինչ է իրենից ներկայացնելու նախադասության մնացած մասը, ինչպիսի գոյականներ պետք է ուղեկցեն վերջինիս, իմաստաբանական առումով ինչպես պետք է բնորոշվեն այդ գոյականները:

Մեր կողմից ուսումնասիրվող բոլոր աղյեկտային բայերը բաժանվում են երկու խմբի՝

1. բայեր, որոնց համար «գործիք» իմաստային արժեքականությունը պարտադիր է, այսինքն պայմանավորված է բայի իմաստով:

2. բայեր, որոնց համար «գործիք» իմաստային արժեքականությունը լրացուցիչ է: Իրենց իմաստային բովանդակությամբ պայմանավորված՝ նման բայերը չեն պահանջում գործիքի առկայություն՝ նրանց արտահայտած գործողությունները լիովին իրագործելի են նաև առանց որևէ գործիքի կամ առարկայի օգնության:

Իրենց հերթին առաջին խմբի բայերը երկու խմբի են բաժանվում՝

1. բայեր, որոնք գործիք հատկանիշով միանշանակ են (однозначное маркирование): Միանշանակ կամ միանշանակ դրոշմվածքով բայերը նրանք են, որոնց իմաստով պայմանավորված գործիքի ընտրությունը չափազանց սահմանափակ է: Նման բայերը, սովորաբար, կապված են լինում մեկ կոնկրետ գործիքի հետ: Այս բայերի թվին են պատկանում to photograph- լուսանկարել, to shave -սափրվել, to iron-արդուկել, to towel -սրբվել, to hammer -մեխել, to saw -սղոցել և այլն:

2. գործիքի ոչ միաժամանակ դրոշմվածքով բայեր, այսինքն բայեր, որոնց իմաստը թույլ է տալիս գործիքի ավելի լայն ընտրություն կատարել՝ to cut -կտրել, to slice -շերտերի բաժանել, to light-վառել, to write- գրել և այլն:

Մենք կանդադարառնանք առաջին խմբի բայերին, որոնց համար գործիք իմաստային արժեքականությունը պարտադիր է, այսինքն պայմանավորված է բայի իմաստով:

"to screw"-to fasten or close by means of a screw

"To screw" բայն առաջացել է համապատասխան գոյականից և իր իմաստում պարունակում է գործիքը: Այս հանգամանքը վերացնում է գործիքի հանդես գալու անհրաժեշտությունը մախադասության մակերեսային կառուցվածքում: Մինչդեռ, եթե նշված բայով մախադասությունը թարգմանենք հայերեն, անհրաժեշտ կլինի նշել գործիքը, քանի որ «ամրացնել» բայը հայերենում պատկանում է գործիք հատկանիշով ոչ միանշանակ դրոշմվածք ունեցող բայերի թվին: Վերջինս պարտադրում է գործիքի հանդես գալը մախադասության շարահյուսական կառուցվածքում՝

But the frame was screwed to the wall. (John Fowels; "The Ebony Tower"; p.39")

Նշված բայով կազմված մախադասության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ներառում է երեք իմաստային արժեքականություններ՝ «ազենս», «պացինս», «գործիք»:

"To screw" բայի համար «ազենսը» և «պացինսը» շարահյուսորեն պարտադիր են, մինչդեռ «գործիք» արժեքականությունը լրացուցիչ է:

"To trap"-to catch in, or as if in a trap

"To trap" բայը կարելի է դիտարկել որպես բայ, որն իր մեջ պարունակում է «գործիք» իմաստը միայն այն դեպքում, երբ այս բայի ազդեցության առարկան հանդիսանում կենդանի մատնանշող գոյականները՝

After several unsuccessful attempts at trapping them with strings I dug large holes in the ground, and covered them with branches.(Robinson Crusoe; D. Defoe).

"To pencil"-to paint, draw, or write with a pencil. Տվյալ բայը կարող է հանդես գալ "to draw with a pencil" իմաստով, ըստ որում "pencil" բայի «պացինն» հարաբերակցում է (ռեֆերենտային մակարդակում) թե՛ թանձրացական, և թե վերացական գոյականների հետ՝

1. There were pencilled entries in a sloping foreign writing. (A. Cristie; "The Sparkling Cyanide" p. 83).

2. At the end of the book were pencilled memoranda of dates or places. (A. Cristie; "The Sparkling Cyanide" p. 83)

"to spoon- to eat by means of a spoon

Նշված բայի բացատրությունից երևում է, որ "to spoon" բայը կազմված լինելով համապատասխան գոյականից՝ իր իմաստով մատնանշում է գործիքը, ինչը բերում է գործիքի դերի նվազեցման՝

1. Spoon the darker icing into a homemade greas proof bag. (Prima Designs Book, p 110. London, October 1996).

2. Spoon boiled potatoes into this press and squeeze. (Prima Designs Book, p430)

3. They brought the egg, which she spooned into her mouth with her eyes closed, it reminded her so strongly of all those breakfasts in the past and washed the taste of it away with sweet, warm tea. (Hill S.; A Bit of Singing & Dancing p. 151)

to towel-to wipe or dry with a towel

Այս բայն առաջացել է համապատասխան գոյականից: Այն ունի «չորացնել, սրբիչով սրբել» իմաստը: Տվյալ բայի ազդող սուբյեկտի դերում միշտ հանդես է գալիս անձը, որը ռեֆերենտային մակարդակում փոխհարաբերում է շնչավոր գոյականի և անձնական դերանունների հետ:

Ազդեցության օբյեկտի դերում կարող են հանդես գալ տարբեր գոյականներ՝ թե շնչավոր, և թե անշունչ:

Անզերեցնում տվյալ բայը մատնանշում գործողության գործիքը, որի արդյունքում գործիքը նախադասության մակերեսային կառուցվածքում ինքնուրույն արտահայտություն չի գտնում: Մինչդեռ, հայերեն թարգմանելիս գործիքը պետք է նշվի, քանի որ «սրբել» բայը սահմանափակում չի դնում: "To towel" իմաստով հանդես գալու դեպքում՝ գործիքն անպայման պետք է դրսևորվի նախադասության մակերեսային կառուցվածքում՝

1. Reluctantly she stepped out and began toweling herself dry. (Sheldon S; Rage of Angels; 57)
2. He dried himself without bothering to towel his hair. (Shaw I.; Evening in Byzantium; 11)

to hammer-to beat, drive or shape with repeated blows of hammer

Տվյալ բայն առաջացել է համապատասխան գոյականից՝ "a hammer": Անգլերենում "to hammer" բայը կանոնավորապես հանդես է գալիս "nail" գոյականի հետ և, հետևաբար, վերանում է գործիքի դրսևորման անհրաժեշտությունը նախադասության մակերեսային կառուցվածքում՝

1.I hammered on a large brass knocker (Chandler R.; The High Window; p. 30)

2.He hammered it against a tree. (Stevens R. T.; "My Enemy, My Love" p.120)

"To hammer" բայով կազմված նախադասության մակերեսային կառուցվածքում կարող է հանդես գալ երկրորդական անդամ խնդիր՝ արտահայտված մեկ այլ անշունչ կոնկրետ գոյականով: Եվ այս դեպքում "hammer"-ը ցույց կտա գործողության իրականացման ձևը՝ "to hammer with a shoe":

"To nail"- to nail-to fasten with or as if with a nail;

Ի տարբերություն "to hammer" բայի, նշյալ բայը սահմանափակումներ չի դնում ազդեցության առարկայի ընտրության վրա և հանդես է գալիս մեծ թվով տարբեր իմաստներ արտահայտող գոյականների հետ «պացինեսի» դերում: Ըստ որում, անգլերենում "to nail" բայը, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները միշտ հանդես է գալիս "to fasten with a nail" իմաստով՝

1. There was a signboard nailed to the top bar.

(John Fowels; "The Ebony Tower"-p34)

2. Other radical students were camped on the Vice-Chancellor's lawn, with the variety of slogans nailed to broom handles and stakes uprooted the building to broom handles and stakes uprooted the building site. (F. Raphael; "The Glittering Prizes"; p. 242)

Նշված բայով կազմված նախադասության վերլուծությունը ցույց է տալիս, որ "to nail" բայն իր մեջ պարունակում է «գործիքը», որը վերացնում է գործիքի հանդես գալու անհրաժեշտությունը նախադասության առանձին անդամի դերում:

Այսպիսով տարբեր բայերով կազմված նախադասությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս խոսելու երկու երևույթի մասին՝

1.Նշված բայերն օգտագործվում են ուղղակի իմաստով: Այս դեպքում, անգլերենում նրանք իրենց մեջ պարունակում են «գործիք» իմաստը:

2. Նշյալ բայերն օգտագործվում են նաև փոխաբերական իմաստով կամ տարբեր ոճական կիրառություններ ունեն: Այս դեպքում նրանցում հանդես է գալիս ոչ թե «գործիքը», այլ «ծևը»:

Որոշ բայեր օգտագործվում են միայն ուղիղ իմաստով (to comb, to iron, to towel, to nail, to spade, to gun, to knife, to bayonet, to scissor):

Եթե համեմատելու լինենք անգլերենի և հայերենի նույնիմաստ բայերը, ապա կնկատենք, որ եթե անգլերենում վերջիններս առաջացել են նույնարմատ գոյականներից և արդեն իսկ մատնանշում են «գործիքը», ապա հայերենում ոչ բոլոր բայերն են, որոնք ծագել են նույնարմատ գոյականներից և, հետևաբար, ոչ բոլորն են, որ անմիջականորեն մատնանշում են «գործիքը»՝ օր քահով փորել, կտրել մկրատով, որոնք հայերենում կարելի է դասել «գործիքի» տեսանկյունից ոչ միանշանակ դրոշմվածք ունեցող բայերի թվին: Սա վկայում է նաև այն մասին, որ կոնվերսիան որպես բառակազմական միջոց ավելի տարածված է անգլերենում, քան հայերենում: Ենթադրելով, որ վերջին շրջանում գոյականներից ածանցման միջոցով համապատասխան բայեր կազմելու միտում է նկատվում (հարադրությունների բառացում), սակայն այդ նորաբանությունները որպես կանոն կենսունակ չեն (մկրատել, գդալել, հրացանահարել և այլն) և լայն գործածություն չունեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Арутюнова Н. Д. О номинативном аспекте предложения; Вопросы языкознания; 1971; № 6, с 63-73
2. Арутюнова Н. Д. Глубинные структуры и неоднозначность предложения; Тезисы научной конференции "Глубинные и поверхностные структуры в языке" 1972.
3. Бархударов Л.С. Структура простого предложения современного английского языка; М; Высшая Школа; 1966; с.196
4. Бархударов Л.С. Понятие поверхностной и глубинной структуры в свете "аллоэмпической" модели языковых единиц. -Тезисы научной конференции "Глубинные и поверхностные структуры в языке" ; М, 1973, с. 8-13
5. Оганесян Н.С. Выражение инструментальных отношений в структуре простого предложения Английского языка, канд. дис., М. 1985, с.140 —1983 " Сборник научных трудов".
6. Կարապետյան Ն.Ա., Անգլերենի գործիքային բայերով կազմված նախադասությունների իմաստային և շարահյուսական կառուցվածքները; Թեկնածուական թեզ; 1999 թ.
7. Կարապետյան Ն.Ա., Անգլերենի «գործիք» միանշանակ դրոշմվածք ունեցող բայերը և նրանց համարժեքները հայերենում; Վ. Բրյուսովի անվ. երժկ. 60 ամյակի նվիրված գիտաժողովի թեզիսներ; 1998 թ.

Վերլուծության ենթարկված օրինակները վերցված են՝

John Fowels, "The Ebony Tower"; F. Raphael "The Glittering Prizes", "Prima Desings Book"; Sheldon S. "Rage of Angels", Shaw. J "Evening in Byzantium"; Chandler R. "The High Window", Stevens R.T. "My Enemy, My Love", Christie A. "Sparkling Cyanide".